ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ

ՆԱԽԱԳԱՀ

STATE COMMITTEE
OF WATER SYSTEM OF THE
RA MINISTRY OF TERRITORIAL
ADMINISTRATION

CHAIRMAN

ՀՀ, Երևան 375010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 909, ֆաքս՝ (374 10) 540 603

13a, Vardanants st., Yerevan 375010, Armenia
Tel.: (374 10) 540 909, fax: (374 10) 540 603

«21» հունվարի 2009 թ. N 03-ԼՀՀ06/69

Ձեր _____ 200 թ. N _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար

պրն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 14.01.2009 թվականի N 02/23.12/96-09 հանձնարարականի, Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի քննարկմանն եմ ներկայացնում «Գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որոշման նախագծի ընդունման հիմնավորման տեղեկանքները, ՀՀ ֆինանսների ու ՀՀ արդարադատության նախարարությունների կարծիքները և նշված կարծիքների քննարկման ամփոփաթերթը (կցվում են):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեում առաջիկայում նախատեսվում է քննարկել և հաստատել համակարգի կազմակերպությունների 2009 թվականի եկամուտների ու ծախսերի նախահաշիվները: Ընդ որում, ջրօգտագործողների ընկերությունների հետ համապատասխան ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունները ներկայումս ճշգրտում են 2009 թվականի ջրօգտագործման պլան-ժամանակացույցները: Քանի որ ներկայացված որոշման նախագծով նախատեսվում է համապատասխան գույքեր ներդնել «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում, ուստի ստորև համառոտ ներկայացնում ենք համապատասխան հիմնավորումներ «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ի 2009 թվականի եկամուտների և ծախսերի կանխատեսումների, ինչպես նաև ֆինանսական ճեղքվածքի փակման հնարավոր աղբյուրների վերաբերյալ:

«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ն 2008 թվականին սպասարկել է 9 գործող ջրամբարներ, որոնց հայկական մասնաբաժնի օգտակար ծավալը կազմել է 403.8 մլն

52

024-859
22.01.09

խ.մ., 5 մայր ջրանցքեր՝ ընդհանուր երկարությունը կազմել է 166.8 կմ, իսկ գլխամասային ջրընդունիչների ջրթողունակությունը 92.5 խ.մ/վրկ է: Շահագործվող պոմպակայանները 12 են, որոնցում տեղադրված են 32 ագրեգատներ: Պոմպերի գումարային արտադրողականությունը կազմել է 44130 խ.մ/ժամ, շարժիչների գումարային դրվածքային հզորությունը՝ 10102 կվտ/ժամ: 2008 թվականին ջրամբարներից և գետերից վերցվել և ցանցին է տրվել 501.9 մլն խ.մ ջուր, որից ինքնահոս եղանակով՝ 449.0 մլն խ.մ, իսկ մեխանիկական եղանակով՝ 52.9 մլն խ.մ:

2008 թվականին ջրօգտագործողներին տրված ջրի ծավալը կազմել է 379.2 մլն խ.մ, որից ինքնահոս եղանակով 326.3 մլն խ.մ, իսկ մեխանիկական եղանակով՝ 52.9 մլն խ.մ: «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ն 2008 թվականին ստացվել է 493.1 մլն դրամի հասույթ:

2008 թվականին մարվել է 2007 թվականից փոխանցված 82.9 մլն դրամի դեբիտորական պարտքը, ստացվել է 3.6 մլն դրամի ծառայության վարձ, ինչպես նաև առաջացել է 13.4 մլն դրամ կանխավճար:

2008 թվականի ընթացքում ստացվել է 515.2 մլն դրամ եկամուտ, ներառյալ կարճատև բանկային վարկը՝ 70.0 մլն դրամի չափով:

Անցած տարում ծախսերի մասով ամենամեծը ընթացիկ շահագործման և պահպանման ծախսերն են, որոնց մեջ 230.7 մլն դրամը էլեկտրաէներգիայի գծով ծախսն է (12815.0 հազար կվտ/ժ), աշխատավարձի գծով ծախսը կազմել է 124.6 մլն դրամ: Սոցիալական ապահովագրության հիմնադրամի հատկացումները կազմել են 27.3 մլն դրամ: Ընդամենը կապիտալ և ընթացիկ շահագործման ծախսերը կազմել են 514.2 մլն դրամ: 2008 թվականին հաշվեգրվել է ավելի քան 40.0 մլն դրամի ԱԱՀ պարտավորություն:

2008 թվականին մարվել է 2007 թվականից փոխանցված ավելի քան 51.7 մլն դրամի կրեդիտորական պարտքերը (սոցապ 2.5 մլն դրամ, էլ. էներգիա 5.4 մլն դրամ, աշխատավարձ 9.5 մլն դրամ և այլն):

01.01.2009 թվականի դրությամբ հաշվառված է 157.3 մլն դրամի կրեդիտորական պարտք, որից՝ 62.8 մլն դրամը էլեկտրաէներգիայի, 70 մլն դրամը՝ վարկի, իսկ մնացածը՝ հիմնականում 2009 թվականի դեկտեմբեր ամսվա աշխատավարձի, սոցապ. ապահովագրության հատկացումների, հարկերի և նյութերի գծով պարտավորություններն են: 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ ընկերությունում ջրամատակարարման ծառայությունների դիմաց առկա է նաև ջրօգտագործողների ընկերությունների նկատմամբ առաջացած 13.2 մլն դրամի չափով կանխավճար:

01.01.2009թ. դրությամբ ընկերության դեբիտորական պարտքը ջրօգտագործողների ընկերություններից և այլ ջրօգտագործողներից կազմում է շուրջ 138.1 մլն դրամ: 2008 թվականի ընթացքում առաջացած ֆինանսական ճեղքվածքի հիմնական պատճառներից է շոգ բնակլիմայական եղանակը, որի արդյունքում առկա սակավ ջրային ռեսուրսների պայմաններում հնարավոր եղավ ապահովել նորմալ և անխափան ջրամատակարարում: Արդյունքում 2008 թվականի համեմատությամբ

ծախսվեց ավելի շատ էլեկտրաէներգիա (շուրջ 30 մլն դրամ), փաստացի հասույթը շուրջ 43 մլն դրամով պակաս ստացվեց, իսկ այն ջրօգտագործողների ընկերությունները, որոնք հիմնականում պարտք էին «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ին՝ չկարողացան համապատասխան վճարումներ իրականացնել (ֆինանսական միջոցների բացակայության պատճառով) և առաջացրեցին համապատասխան դեբիտորական պարտքեր:

2009 թվականի ընթացքում «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվում է ջրօգտագործողների ընկերություններին և այլ ջրօգտագործողներին մատակարարել շուրջ 379 մլն խ. մ ջուր, այդ թվում՝ ինքնահոս եղանակով՝ 326.3 մլն խ.մ, մեխանիկական եղանակով՝ 52.9 մլն խ.մ: Նշված մատակարարված ջրի դիմաց կգոյանա 493.1 մլն դրամի հասույթ, որը 100 տոկոս գանձելու դեպքում կկազմի 493.1 մլն դրամ: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ «Արմավիր», «Սև-ջուր-Ախթամար», «Թալին» և «Աջափնյակ-ոռոգում» ՋՕԸ-երի մասով մատակարարված ոռոգման ջրի դիմաց առկա է շուրջ 13.2 մլն դրամի կանխավճար, ապա գանձումից եկամուտը կլինի շուրջ 480 մլն դրամ: Եթե նույնիսկ 100 տոկոսով հավաքագրվի դեբիտորական պարտքը, ապա այն կկազմի 138.1 մլն դրամ: Ակնկալվում է նաև այլ եկամուտներ ՀԷԿ-ից (շուրջ 3.6 մլն դրամ): Արդյունքում ընդհանուր եկամուտը կկազմի շուրջ 621.7 մլն դրամ:

2009 թվականին ընթացիկ շահագործման և պահպանման ծախսերը կկազմեն շուրջ 556.3 մլն դրամ, որից միայն էլեկտրաէներգիայի և աշխատավարձի (ներառյալ սոցապ. վճարումները) գծով ծախսերը կկազմեն համապատասխանաբար շուրջ 231 մլն դրամ և 152 մլն դրամ: Նորոգման ծախսերը կկազմեն շուրջ 57 մլն դրամ, հումքի, հիմնական և օժանդակ նյութերի, պահեստամասերի, վառելիքի և քսայուղերի արժեքը՝ շուրջ 48 մլն դրամ, հարկային պարտավորությունները՝ շուրջ 42 մլն դրամ: Մնացած ծախսերն են՝ կարճաժամկետ բանկային վարկի տոկոս, կոմունալ, կապի, ներկայացուցչական, բանկային ծառայությունների վճարներ և այլն:

Նախատեսվում է մարել նաև առկա՝ 62.8 մլն դրամի էլեկտրաէներգիայի, 70 մլն դրամի վարկի, ինչպես նաև դեկտեմբեր ամսվա համար առաջացած աշխատավարձի, սոցիալական ապահովագրության վճարի, հարկերի և նյութերի գծով առկա շուրջ 24.5 մլն դրամի կրեդիտորական պարտավորությունները:

Առաջացած ֆինանսական ճեղքվածքը նախատեսվում է մարել ներկայացված որոշմամբ «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ին տրվող գույքերի օտարումով: Ակնկալվում է ստանալ առնվազն 50 մլն դրամի եկամուտ, որը կնպաստի «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ի մոտ 2009 թվականին առաջացած ֆինանսական ճեղքվածքի մարմանը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ոռոգում-ջրառ իրականացնող ՓԲԸ-ների մասով առկա խնդիրների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն դեռևս իր 2008 թվականի սեպտեմբերի 29-ի N 03-ԱԱ 06/2028 գրությամբ դիմել էր Հայաստանի Հանրապետության վարչապետին, որի վերաբերյալ առկա է Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականը՝

«խնդրում եմ դեկավարվել ՀՀ օրենսդրությամբ՝ հարցը քննարկելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի հետ մակագրությամբ»: Հարցը քննարկվել է նաև ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի հետ:

Հաշվի առնելով վերը նշվածները՝ առաջարկում եմ «Գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի քննարկմանը:

Առդիր՝

Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Է. Պապյան
54-02-29

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«__» «_____» 2008 թվականի N _____-Ա

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Թույլատրել Երևանի «Զրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով իրեն պատկանող 7195936.44 դրամ արժողությամբ գույքով (Պուշկինի փող. 51/2 շենքը) վճարել այդ ընկերության կողմից տեղաբաշխված՝ պետությանը պատկանող համապատասխան քանակի բաժնետոմսերի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերման դիմաց:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝ «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը պայմանագրային հիմունքով վարձակալության հանձնված 10157443.42 դրամ հաշվեկշռային արժեք ունեցող Գետամեջի պոմպակայանի հին շենքը ետ վերցնել «Երևան Ջուր» ՓԲԸ-ից՝ կատարելով համապատասխան փոփոխություն վարձակալության պայմանագրում:

3. Հայաստանի Հանրապետության կողմից ձեռք բերված՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքն ամրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

4. Երևանի «Զրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից ձեռք բերված բաժնետոմսերը մարելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան չափով նվազեցնել Երևանի «Զրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընեկրության կանոնադրական կապիտալի չափը:

5. «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում հաշվառված գույքը՝ համաձայն հավելվածի ներդնել «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման միջոցով:

6. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-րդ կետում նշված գույքի առանձնացման ժամանակ հաշվարկվող ավելացված արժեքի հարկի վճարումը կատարվում է «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով.

2) սույն որոշման 5-րդ կետում նշված գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացվում են «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

Հավելված

Հայաստանի Հանրապետության կառավարության

2008 թվականի «_____» «___»-ի

N_____ որոշման

Ց Ա Ն Կ

«ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի գույքի կազմից առանձնացվող և «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնվող գույքի

դրամ

Հ/Հ	Անվանում	Սկզբնական արժեք	Մաշվածություն	Մնացորդային արժեք առ 21.10.2008թ.
1	Պուշկինի փող. 51/2 շենքի ծառայողական տարածք	8952000.0	1756063.56	7195936.44
2	Գետամեջի պոմպակայանի հին շենք	11537161.50	1379718.08	10157443.42
3	Վարդանանց 13ա հասցեում գտնվող վարչական շենքի հարակից ավտոտնակները			0.0
	Ընդամենը	20489161.5	3135781.64	17353379.86

ՏԵՂԵԿԱՆՔ

«Գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման հիմնավորման վերաբերյալ

ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի «Երևանի «Զրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից օգտագործվող գույքը վարձակալությամբ փոխանցելու և ընկերությունը վերակազմակերպելու մասին» N 309-Ն որոշման և 2005 թվականի դեկտեմբերի 14-ի «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և «Ջեներալ դեզ Օ» կազմակերպության միջև ստորագրված «Երևանի «Զրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի ջրային համակարգերի վարձակալության մասին» պայմանագրի համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմին որպես պետական սեփականություն հանձնված գույքը վարձակալությամբ տրվել է «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը:

«Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության գրության համաձայն Գետամեջի պոմպակայանի հին շենքը չի շահագործվում ընկերության կողմից և առաջարկվում է այն հանել վարձակալությամբ հանձնված գույքի ցանկից: Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ն գրության համաձայն ընկերությունն առաջարկել է իր հաշվեկշռում հաշվառված Պուշկինի փող 51/2 շենքի ծառայողական տարածքն ամրացնել «ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

Վերը նշված գույքերը, ինչպես նաև Վարդանանց 13ա հասցեում գտնվող վարչական շենքի հարակից ավտոտնակները որոշման նախագծով նախատեսվում է ներդնել «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ համապատասխան չափով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալի չափը: Միաժամանակ նկատի ունենալով «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը նախատեսվում է ներդրված գույքն օտարել, իսկ օտարումից առաջացած ֆինանսական միջոցներն ուղղել «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կրեդիտորական պարտքերի մարմանը:

Այս կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության
ջրային տնտեսության պետական կոմիտե

ՏԵՂԵԿԱՆՔ

«Գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքների ամփոփման մասին

N	Նախագծի վերաբերյալ առաջարկություն ներկայացնող մարմնի անվանումը	Նախագծի վերաբերյալ կատարված դիտողությունների/ առաջարկությունների բովանդակությունը	Ընդունման/մերժման հիմնավորումը
1	ՀՀ ֆինանսների նախարարություն	1. Անհրաժեշտ է Նախագծի 1-ին կետը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության վարչապետի 06/07.11.2006 թվականի N 099-7078 հանձնարարականի պահանջներին: 2. Նախագծի 2-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով և պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այդ դեպքերում: Հատկապես «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը /այսուհետ՝ Ընկերության/ պայմանագրային հիմունքներով վարձակալության հանձնված գույքը հնարավոր է հետ վերցնել Ընկերությունից՝ օրենսդրության վերը նշված պահանջների պահպանմամբ լուծելով կամ փոփոխություն կատարելով վարձակալության պայմանագրում: 3.«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը, ուստի Նախագծի 3-րդ կետում անհարժեշտ է նշել, թե Օրենքով սահմանված ի՞նչ եղանակով է նախատեսվում ավելացնել «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը:	1. Առաջարկությունն ընդունվել է և որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 2. Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին առաջարկությունը ներկայացվել է հենց «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից և սույն ՀՀ կառավարության որոշման նախագիծը համաձայնեցվել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ: Պայմանագրում փոփոխությունը կկատարվի որոշման ընդունումից հետո: 3. Առաջարկությունն ընդունվել է և որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
2	ՀՀ արդարադատության նախարարություն	Դիտողություններ ու առաջարկություններ չկա:	

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե

3376

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МИНИСТР

MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող., 1
0010, Ереван, ул. Мелик-Адамяна, 1
0010, Yerevan, Melik-Adamyan str., 1
Հեռ./Тел./Tel. (+374 10) 59 53 04
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 52 42 82
E-mail: minister@minfin.am
Web page: www.minfin.am

4.5.2022 թ. N 52

Ձեր N _____

ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը
ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
պրն Ս. Ամիրխանյանին

Հարգելի պրոֆ. Ամիրխանյան

Ձեր 27.10.2008թ. N07-ՍՍ06/2256 գրությամբ ներկայացված [illegible] Հանրապետության հանրապետական կառավարության [illegible] վերաբերյալ հարցում ենք հանձնարարել.

Ընդհանրապես 1. Նախագծի 1-ին կետը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության վերջին օրենքի 06.07.11.2006 թվականի N 099-ՀՕ-78 համարանիշով գրանցված [illegible]:

Նախագծի 2-րդ հոդվածի կապակցությամբ հարցում ենք. [illegible] Հանրապետության բնապահպանության օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի [illegible] պատասխանատվության վերաբերյալ և ուծումը հնարավոր է, երբ [illegible] բան ճանաչված չէ օրենքով և պարտադիր: Նույն հոդվածի 2-րդ մասի [illegible] պարբերությունը դրանց մեկի պահանջով, կարող է փոփոխվել [illegible] [illegible] դրա [illegible] տալ՝ պատասխանատվության [illegible] նախատեսված այլ դեպքերում: Հանձնարարում [illegible] բնապահպանության [illegible] Ընդհանրապես պարտադիր [illegible] հանձնված զայրը հնարավոր է հետ վերցնել [illegible] պահանջների [illegible] [illegible] վերաբերյալ [illegible]:

Միաժամանակ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը, սակայն Նախագծի 3-րդ կետում անհրաժեշտ է նշել, թե Օրենքով սահմանված ո՞ր եղանակով է նախատեսվում ավելացնել ««Սյունյան-Աշտար-ջր[illegible]»» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը:

Հարգանքով՝ Տ. Դավթյան

Կատարող՝ [illegible] Համազ[illegible]յան
595-108

3489

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41/ա, հեռ. 380-389
էլ. փոստ info@moj.am

№ Ա 5339
«26» 11 2008թ.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Պարոն Ա.Անդրեասյանին

Ի պատասխան Ձեր 2008թ. նոյեմբերի 20-ի 05-ԱԱ06/2416 թվակիր նամակի

Հարգելի պարոն Անդրեասյան

Կից ներկայացնում ենք «Գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Հարգանքով՝

Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

կատ՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն
Ա.Հակոբյան

05-5526
28 11 2008թ.

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ

Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Իրավական ակտերի փորձաքննության
վարչության պետ՝

Կ. ԽՏՐՅԱՆ